ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

Rédacteur en chef et Directeur

Tigran Nazarian

ՊԻՖԼԻՍ

№ 2 ՓԵՏՐՈՒԱՐ XX—1909

Tiflis

ՓՐԻԴՐԻԽ ՇՕՊԷՆ

Շատ սակաւ երաժշտագէտներից ոչ մէկը գուցէ չէ բռնում այնպիսի բացառիկ տեղ երաժշտական արւեստի մէջ, ինչպէս այդ հանճարեղ լեհացի կոմպոզիտորը, որը ծնւել է սրանից ուղիղ հարիւր տարի առաջ—1809 թւի փետրուարի 16-ին (մարտի 1 ն. տ.) Վարշաւայի մօտ գտնւած Ժելեազովա Վօլեա գիւղում և վախճանւել է սրանից վաթսուն տարի առաջ։ Նրա հայրը ֆրանսիացի էր, իսկ մայրը—լեհուհի. նա երկար տարիներ կանոնաւոր երաժշտական կրթութիւն ստացաւ նշանաւոր գերմանացի պրօֆեսօրի ձեռքի տակ։

Նրա հայրը դաստիարակ էր մի արիստօկրատ ընտանիքում և իր համեստ եկամուտով հազիւ էր կարողանում ընտանիք պահել։ Այդ թոյլ, հիւանդոտ երեխան չէր ցոյց տալիս ոչ երաժշտական, ոչ էլ մի որևէ այլ ընդունակութիւն. սակայն դա արգելք չեղաւ նրա ծնողներին յանձնել իրանց երեխային մի հին չեխ-ուսուցչի (Zewny), գերմանական կլասիկների (Բախի հայրն) ջերմ երկրպագուին, սովորեցնելու նրան նուագել դաշնամուրի վրայ։



ՖՐԵԴՐԻԽ ՇՕՊԷՆ

(Մինդեան հարիւրամեակի առիթով)

Մի քանի տարուց յետոյ պատանի Շօպէնը առիթ ունեցաւ նուագելու իշխան Անտօն Ռաձիվիլլի ներկայութեան. իր ժամանակի այդ յայտնի մարդը հիացաւ նրա թեթև, բանաստեղծական, գրաւիչ նուագով, նրա բնական համեստութեամբ, զեղեցիկ արտաքինով և իշխանը իր հովանաւորութեան տակ առնելով նրան, իր հաշւով տեղաւորեց նրան Վարշաւայի լաւագոյն ուսումնարաններից մէկում և մտցրեց նրան լեհ բարձրաստիճան հասարակութեան շրջանը, որտեղ այդ պատանին շուտով դարձաւ ամենքի սիրելին։ Նրա յաջողութեան նպաստում էին թէ իր մեղմ, ուրախ և սիրալիր բնաւորութիւնը, թէ գրաւիչ արտաքինը իր խելացի, կապտագոյն աչքերով, դէմքի քնքոյշ և պայծառ գոյնով ու շէկ, գանգուր մազերով, թէ նրա սրամիտ, քաղձրաձայն խօսակցութիւնը և թէ մանաւանդ արտայայտիչ և ազդու նւագումը։

Տասն և վեց տարեկան հասակում Ֆրիդրիխ Շօպէնը ընդհատեց դաշնամուրի դասերը և շարունակում էր կատարելագործւել առանց ուսուցչի, միևնոյն ժամանակ սկսեց եռանդով պարապել երաժշտագիտութեան թէօրիայով, Վարշաւայի կոնսերւատօրիայի տեսուչ Էլսներների ղեկավարութեամբ։ 3—4 տարւայ ընթացքում նա բաւականին իւրացրեց երաժշտութեան տեխնիկան և յետոյ մի ճանապարհորդութիւն կատարեց դէպի Բերլին, Դրեզդէն, Պրագա և Վիէննա, որով նա հնարաւորութիւն ունեցաւ մօտիկից ծանօթանալու այն ժամանակւայ հմուտ երաժիշտների նւագներին և միևնոյն ժամանակ բեմ դուրս գալ աւելի բազմամարդ և բանիմաց հասարակութեան առաջ, որը միանգամից գնահատեց նրա խաղի և նրա հեղինակութիւնների բազմաթիւ արժանիքները։

1830 թւի վերջին ապստամբեց Լեհաստանը։ Մի տարուց յետոյ ճնշւեց այդ ապստամբութիւնը և գաղթականների —հայրենիքի այդ լաւագոյն որդիների— խմբերը ստիպւեցան փրկութիւն որոնել օտարութեան մէջ։ Նրանց թւումն էր և Ֆրիդրիխ Շօպէնը, որը փախուստ տւեց յաղթողների յետապնդումից և մտածում էր բնակութիւն հաստատել Լօնդօնում, սակայն շատ լեհացի արիստօկրատ ընտանիքների հետ միասին ճնաց Պարիզում, որտեղ անցկացրեց համարեա իր ամբողջ կեանքը, լինելով տաղանդաւոր գրողների, արտիստների և երաժիշտների շրջանում, որոնցից յայտնի էին Հէյնէն, Միցկևիչը, Ժ. Զանդը, Լիստը, Մեյերբերը, Շումանը և Մենդելսօնը ու իր նշանաւոր հայրենակիցները—իշխաններ Պօտօցկիները, Զերտօրիժսկիները, Լիւբօմիրսկիները։

Այդ ժամանակի նշանաւոր երաժշտագէտները—Ֆիլդը և Կալկբրեններն անւանեցին Շօպէնին «հիւանդանոցի տաղանդ եւ մատերը անկանոն զործ ածող պիանիստ», որ սակայն արգելք չեղաւ արւեստի այդ ժամանակւայ պարագլուխներին խոնարհել այդ երիտասարդ հանճարի առաջ։ Նրա թոքերի հիւանդութեան տարէցտարի սաստկանալը ստիպում էր նրան խոյս տալ մարդկանց հասարակութիւնից, առանձնանալ. նա սկսում էր միշտ աւելի ու աւելի հեռու պահել իրան երաժիշտների աղմկալի համախմբումներից և ժամանակն անց էր կացնում լեհ արիստօկրատիայի իր մըտերիմ շրջանում և իր բազմաթիւ աշակերտների ու

Ցիշո՞մ ես, դու նատած դաշնամուրի առաջ։

աշակերտուհիների հետ, որոնցից մի քանիսը շնորհիւ իրանց պէքի ընկնող ընդունակութիւնների վայելում էին ուսուցչի առանձին համակրանքը։ 1837 թուին հիւանդութիւնն այնքան սուր կերպարանք առացաւ, որ բժիշկների խորհրդով Շօպէնն ստիպուած եղաւ տեղափոխել Մայօրկա կղզին, և այստեղ մխայնութեան մէջ, սիրած կնոջ (ժօրժ Զանդի) մօտ, անցկացնել մօտ երեք տարի։ Այդ կենակցութիւնը շարունակուեց եօթ տարի ևս Պարիզում և այնքան անտանելի դարձաւ աղմկալոյզ տեսարաններով, որ տարբում էր նրա կինը —հուշակաւոր դրողը—որ 1847 թուին Շօպէնը բաժանուեց նրանից և գնաց ճանապարհորդելու Անգլիա և Շօտլանդիա. բայց արդէն մի տարուց յետոյ վերադարձաւ Պարիզ ու մի տարուց յետոյ էլ ընդմիշտ անկողին մտաւ. նրան սկսեց խնամել իր քոյրը, որը եկել էր Վարշաւից այդ անյուսալի հիւանդ կօմպօզիտօրի մօտ։

1849 թուի հոկտեմբերի 18/30 սբ. Մադլէնի եկեղեցին տարաւ Շօպէնի դագաղը։ Նրա վերջին ցանկութեան համեմատ թաղման արարողութեան ժամանակ երգուեց Մօցարտի—որին նա պաշտում էր—հեղինակութիւնից և իր Շօպէնի կազմած թաղման մարշը, որը կատարում էին հուչակաւոր Լաբլաշը և Պօլինա Վիարդօն։ Նա թաղուած է Père Lachaise գերեզմանատունը, իսկ այժմ պատրաստուում են տեսնուում տեղափոխելու նրա աճիւնը Վարշաւ և արձան կանգնեցնելու նրա վրայ։

—

Համարեա իր բոլոր ստեղծագործութիւնները Շօպէնը գրել է միմիայն դաշնամուրի համար. նրանց վերնագիրները — էտիւդ, վալս, մազուրկա և այլն—այնպէս պարզ և հասարակ են, որ ոչինչ կամ շատ քիչ բան են արտայայտում, այնպէս որ մինչև Շօպէնի երևալը ոչոք չէր էլ մտածի այդպիսի պարզ վերնագիրների տակ փնտռել այն անսահման խոր բովանդակութիւնը, այն անթիւ վառ գոյները, որ առաջին անգամ ուից մեզ նրա մուզան։

Դիշատած հայրենիքի կսկիծը հնչում է նրա համարեա ամէն մի տողից. դա հնչում է նրա չորս բալլադների մէջ, որոնք երբեմն խորհրդաւոր են, երբեմն քնքոյշ, գգուող, երբեմն յուսահատ հառաչող. նա լսւում է նրա յիսուն մազուրկաների մէջ, նա ծորում է նրա 14 վալսերից, և այլն, և այլն։

Սակայն նա ազգային վշտի երգիչ չէ միայն. Շօպէնի մուզայի աւելի գերագանց կողմը կազմում է համաշխարհային, հասարակական, ընդհանրական վիշտը, նման Բայրօնեան Weltschmerz-ին, բայց արտայայտած նուրբ, գեղեցիկ, եթերային ձայնագծերով։

Վինելով Զայկովսկու և Վագների նման երկրպագու Մօցարտին, այդ նշանաւոր լեհացի կօմպօզիտօրը ներկայանում է ինչպէս Բեթհովէնի տաղանդաւոր յետևորդներից մէկը, իբրև մի խորին րոմանտիկ, որ անսահման չափով զարգացրել է Բեթհովէնի գերակշռող արամադրութիւններից մէկը։ Շօպէնն անուանեց այդ արամադրութիւնը—Zäl (ափսոս), սակայն Լեհաստանի նախկին մեծութեան անկման մասին եղած ափսոսանքը նրա մէջ դառնում է ինչպէս մի նախաղուտ դէպի համաշխարհային վիշտը, մարդկութեան անմխիթար ապագայի և անցեալ tempi passati մասին...

Վ. Ստասովը անալիզի ենթարկելով Շօպէնի մի քանի հեղինակութիւնները, գտել է նրանց մէջ ասիական կամ արևելեան էլեմենտները. դրանք այնքան սովորական են նրանց մէջ և պայծառ, որ հաւանական՝ նօրէն իրանց վրայ կըղարձնեն հետազօտողների ուշադրութիւնը և գուցէ կըպարզւի արևելքի և արևմուտքի այն սերտ, օրգանական կապը, որ նկատուում է լեհացի այդ հանճարեղ կօմպօզիտօրի ստեղծագործութիւնների մէջ։

Վ. Գ. Գուրգանեան

Հեղափոխության ապստամբությունը 1830 թ., որին մասնակցեց եւ Փրիդրիխ Շօպէնը

ՄՕԶԱՒԿ

ՄԵՐ ՎԻՃԱԿԸ

Ամպրոպների աշխարհումն ենք ապրում, ուր շանթ ու կայծակն է ծնում։ Երկունքի խաւար մթութեան մէջ ահարկու մրրիկներն են մեզ քշում, ուր գուցէ չենք էլ կամենում գնալ. ահեղադղորդ փայլակի վարկենական լուսով մենք մեր դէմքը արեան գետերի մէջն ենք տեսնում։

Ահա այս է մեր արդի վիճակը։ Կեանքի ու մահուան այս սահմանակէտի վրայ իսկ մենք կը-շարունակենք կատարել մեր պարտքը, ոչ այնքան, որքան կարող ենք, այլ որքան հնարաւոր է։

Թեոֆիլ վարդապետ

ԵՐԱԶ

Եւ դու հոգետանջ խաբուսիկ երազ
Ի՞նչու նորից նոր եկար վրդովել
Հանգիստ մի մարդի, որը հազիւ հազ
Ուզում էր կարծես վշտից ազատուել։

Դեռ նոր էր ծածկւել մի բարակ խոցով
Սրտիս խոր վէրքը, արիւնը դադրել.
Ի՞նչու պոկեցիր դու անգութ ձեռքով
Այդ խոցը.—նորից արի՞ւն հոսեցնել։

Սիրոյ բոցերը կեանքս մաշեցին
Հասաւ եւ նոցա հանգչելու րոպէն,
Բայց քեզնով դարձեալ նրանք բորբոքեցին,
Կործանիչ հրդէհ բարձրացաւ նորէն։

Եւ սպառեցի իմ բոլոր ուժեր,
Որ կարողանամ մոռանալ նրան
Դու ջախջախեցիր սրտիս փակ դռները
Եւ նորից այնտեղ դրեցիր նրան։

Եւ րոպէական իմ երջանկութիւն
Ձգացաւ դարձեալ քեզ հետ միասին.
Ցաւ, վիշտ ու տանջանք, թախիծ, տրտմութիւն,
Դու անսիրտ երազ, թողիր ինձ բաժին։

Էօճիդ

ԴԱՌՆ ՑՆՈՐՔ

Կատիւլլ Մէնդէսից

(Մահուան առիթով)

Նա, որին ձգտում է իմ տանջւած սիրտը, այն է, որ դոյութիւն չունի։ Սակայն ինչպէս չքնաղ են նրանք իրենց անուշաբոյր փթիթով,—թխահերները գիշերւայ նման սեւ ծամերով, խարտեաշները՝ գարնան Արշալոյսի երանգն ունեցող գիսակների ալիքներում, շիկահերները՝ նման արևամտի ժամի ոսկեհուռ արեւելքին...

Այդպէս է իմ դառն ցնորքը. և ես որոնում եմ դիւթւած պարտիզում, որտեղ բացւած են այնքա՛ն շատ վարդեր. որոնում եմ մի ծաղիկ, որը նման չի այլ ծաղիկների։ Նա, որին ձգտում է իմ տանջւած սիրտը, այն է, որ գոյութիւն չունի! Սակայն ինչպէս գեղեցիկ են նրանք իրենց անուշաբոյր փթիթով...

Եւ եթէ առասպելական կախարդը, բուռն կարկտացութիւնից, միլիոնաւոր աստղերից ինձ առաջարկէր և՛ Օրիօնի [1]) վարդը, և՛ Ալ'դէբարանի [2]) ու Սիրիուսի [3]) հսկայական սուտակները, և՛ բոլոր լուսատու աշխարհները, կաթնածիրի [4]) կաթիլները,—ես դարձեալ կասէի. «Ինչի՞ իմ պատճառով երկինքը զրկել իր գեղեցկութիւնից։ Նա, որին ձգտում է իմ տանջւած սիրտը, այն է, որ գոյութիւն չունի...

Մռաւեան

***

Կայծակի թափը կուզէի լիներ
Բուռն սրտիս մէջ՝ ցաւոտ, մշտայոյզ.
Ինչպէս ովկիան սիրտս մրրկուէր,
Երկինք ու երկիր անէր ջրասոյզ...
Եւ ոչնչութեան այս սուրբ քաօսից
Կըստեղծագործէի նոր կեանք, նոր աշխարհ,
Ուր չարն ու կեղծիք գամւած ժայռերին՝
Փաւէին իրենց մեղքերն անհամար...

Ե. Պետրոսեան

ՑԵՐԵԿ ԵՒ ԳԻՇԵՐ

(Ռուսերէնից)

Ցիշում եմ ցերեկը... երբ դու մատաղ և գեղեցիկ
Փայլուն կեանքի մէջ մնար.
Կարծես, այն ժամանակ, քո բոլոր էութիւնը
Հնչում էր երաժշտական ներդաշնակութեամբ։
Քո առաջին պարզումէր
Լուսաւոր, պարզ եւ հարթ ուղին.
Եւ դու, նուրբ եւ գեղեցիկ, նազանքով
Նրա վրայից գնում էիր։

Ցիշում եմ գիշերը... երբ ընդարմացած
Անսպասելի ապագայ արհաւիրքներով՝
Նստել էիր հանդէպս մահւան պէս պաղ եւ գունատ.
Կարծես ամէնը, որով բաբախում է սիրտը,
Ինչով ջերմանում, գեղեցկանում է կեանքը,
Բոլորը միանգամայն որպէս անպակի
Ջարդ ու փշուր է եղել։
Ես դողդղջուն, անձայն նայում էի քեզ
Մխիթարելու կամ օգնութիւն հասցնելու
Զրկար ոյժ։
Երեւում էր, որ այդ տեսակ տանջանքի վերջը
Մահն է։
Մահով անցնում է բոլորը—
Թէ ցերեկը եւ թէ գիշերը։

Հասս

---

1) Հին յունական դիցաբանութեան մէջ Օրիօնը մի գեղեցիկ հսկայ էր և որսորդ, որին սիրում էր Էօսը. այդ պատճառով պայրացած Արտեմիսը նետով սպանեց նրան։ Օրիօնին ապա աստղ դարձրին և տեղաւորեցին Պլէադ'ից (բազմութիւնից) ոչ հեռու։ Հայերէն Օրիօնը Հայկ համաստեղութիւնն է։

2) Առաջին մեծութեան աստղ Ցուլ (կենդանակերպ) համաստեղութեան մէջ։

3) Սիրիուս—համաստեղութիւն է։

4) Կաթնածիրը կամ յարդագողի ճանապարհ։

Թարգմ.

ՕՐԻԱՑ ԹԱՄԲՐԻ ԱԼԲՈՄԻՑ. ԿԻՍՕՐ

ՅԻՇՈՒՄ ԵՍ...

(Արձակ բանաստեղծութիւն)

I

Յիշո՞ւմ ես...

Երաժշտութիւնը հնչում էր։ Շոպէնի չքնաղ վալ'սի հնչիւնների տակ, շքեղ զարդարուած դահլիճում պտտւում էին ուրախ, անհոգ զոյգերը։ Դահլիճի մի հեռաւոր անկիւնում կանգնած, ես անյագ աչքերով նայում էի քեզ վրայ, քո աննման հրեշտակային պատկերիդ։ Ինչեր չէի տալ ես այդ րոպէին, որպէս զի կարողանայի կրծքիս սեղմել այդ հրաշալի իրանը, նայել աստուածային կրակով փայլող աչքերիդ մէջ, թոթովել ականջիդ սիրոյ խօսքեր...

Բայց մենք ծանօթ չէինք... Ես պարել չըգիտէի...

Եւ դահլիճի մի հեռաւոր անկիւնում կանգնած, ես անթարթ աչքերով նայում էի քեզ վրայ....

II

Յիշո՞ւմ ես...

Թատրոնում խաղում էին Հալևմէ օպերան։ Դու այնտեղ էիր։ Եւ ես էլ այնտեղ էի...

Ամբողջովին տարւած քո գեղեցկութեամբ, սիրտս լի սիրով, ես հետեւում էի քեզ ամեն տեղ, դիշեր ու ցերեկ ու հանդիստ չունէի. միջոցներ էի փնտրում քեզ հետ ծանօթանալու...

Եւ մեր ընդհանուր ծանօթներից մէկը ծանօթացրեց մեզ այդտեղ միմեանց հետ... Ես անսահման երջանիկ էի զգում ինձ։ Հեղուս կապւել էր երջանկութիւնից և ես չէի կարողանում ոչ մի խօսք արտասանել... Իսկ դու խօսում էիր, անվերջ խօսում, հրըճւում օպերայի տպաւորութիւնից և զարմանում, որ ես չէի պատասխանում։

Քո խօսքերիդ իւրաքանչիւրը ելևէջը իմ սրտիս խորքն էր թափանցում։

Եւ ես երջանիկ էի։

III

Յիշո՞ւմ ես...

Ձեր դահլիճում նստած, ընդհանուր ուրախութիւնից հեռու, ես խորասուզւած էի մտքերիս մէջ։ Դու, նստած դաշնամուրի առաջ, նւագում էիր, և դաշնամուրի հնչիւնները տարածւում էին օդում չքնաղ ելևէջներով և գնում, կորչում անսահման տարածութեան մէջ...

Քո ծննդեան տարեդարձն էր, և հաւաքւած հիւրերը ուրախանում, զւարճանում էին, իսկ ես, ընդհանուր ուրախութիւնից հեռու, դահլիճում նստած՝ լըսում էի քո նւագը...

Դու դադարեցրիր երաժշտութիւնդ և մօտենալով ինձ, քնքոյշ ձայնով ասացիր՝

—Ինչո՞ւ էք տխուր...

Ա՜խ, այդ ձայնը մինչև այժմ էլ հնչում է ականջներումս։

IV

Յիշո՞ւմ ես...

Գարնանային մի չքնաղ երեկոյ մենք միասին նստած էինք այգում, ծառերի հովանու տակ, նստարանի վրայ։ Երկնքի վրայ փայլում էր կաթնագոյն լուսինը, իսկ մեղմիկ զեփիւռը տարուբերում էր ծառերի տերևները։ Օդը լցած էր վարդի ու մխիթարի քնքոյշ հոտով...

Եւ ծառերի հովանու տակ, նստարանի վրայ նըստած, մենք երջանիկ էինք զգում մեզ։

Երկուսիս հոգին էլ տանջւում էր միևնոյն զգացմունքից, երկուսիս սիրտն էլ լի էր անսահման երջանկութեամբ։

Ես ասացի քեզ.

—Սիրում եմ...

Եւ դու պատասխանեցիր.

—Սիրում եմ...

Եւ մեր շրթունքները իրար հպւեցին ու երկար ժամանակ չէին ուզում բաժանւել միմեանցից...

Ա՜խ, այդ համբոյրը...

Որքա՜ն երջանկութիւն, բայց և որքա՜ն վիշտ պատճառեց նա ինձ։

V

Յիշո՞ւմ ես...

Անթիւ մոմերով շքեղ լուսաւորւած եկեղեցում դու կանգնած էիր քո նշանածիդ կողքին...

Պսակի սպիտակ հագուստը և գլխիդ զարդը անհաման տեսք էր տալիս քեզ... Այդ րոպէին երկնքից իջած մի հրեշտակի էիր նմանում...

Դու ուրախ էիր, երջանիկ։ Դու ամուսնանում էիր մի հարուստ, երիտասարդ տղամարդու հետ, որին փայլուն ապագայ էր սպասում։

Ուրիշ էլ ի՞նչ կարող է ցանկանալ ժամանակիս կինը...

Իսկ ես, եկեղեցու մի անկիւնում կանգնած, ձեռս ծոցիս, լուռ արտասւում էի։

Ա՜խ, ինչո՞ւ այդ րոպէին կաթւածահար չեղայ ես...

VI

Յիշո՞ւմ ես...

Տարիներ անցան և մենք դարձեալ տեսնւեցանք։

Այգում, ծառերի հովանու տակ, նստարանի վրայ նստած, մենք դարձեալ միայնակ էինք։

Դու ասացիր, որ դժբաղդ ես... Ասացիր, որ շատ ունակում ես սիրել ինձ...

Եւ մեր շրթունքները դարձեալ հպւեցին իրար... Դաւաճան համբոյր...

Իսկ ես երջանիկ էի, ես ուրախ։

VII

Յիշո՞ւմ ես...

Դու ինձ խաբեցիր։ Կեանքի միօրինակութիւնից յոգնած, դու նորանոր արկածներ էիր փնտրում և պատահեցիր ինձ։ Նախկին սիրահարին աւելի հեշտ էր ճանկերի մէջ առնել և դու առար...

Իսկ ես, կուրացած իմ երջանկութեամբ, չէի տեսնում այդ, չէի զգում...

Ա՜խ, ինչու՞ ես այնքան կուրացել էի այն ժամանակ քո սիրուց։

Եւ երբ վերջապէս իմացայ այդ, ես չէի հաւատում։

Քո չքնաղ պատկերդ առաջւայ պէս մաքուր էր իմ սրտում...

VIII

Յիշո՞ւմ ես...

Մի օր, ծառերի հովանու տակ, նստարանի վրայ, որտեղ ես այնքան երջանիկ ժամեր էի անց կացրել

քեզ հետ, ես տեսայ քեզ մի ուրիշի հետ գրկախառնուած...

Ինչ էր մնում մեռնելի տեղն ու տեղը:

Բայց չըմեռայ... Համր քայլերով ես յետ գնացի:

Իսկ դու ինձ չընկատեցիր... Դու շարունակում էիր գրկախառնուած մնալ քո սիրահարիդ հետ...

Հարբածի պէս օրօրւելով, այս ու այն կողմն ընկած ջրերի մէջ իմ մաքուր սէրս...

Ապրե՛լ... բայց ինչո՞ւ համար ապրել, երբ իմ աւաջինն, մաքուր սէրս, ինձ կեանք ներշնչող զգացմունքը արդէն մեռած է...

Եւ երբ այգում, ծառերի հովանու տակ, նստած բանի վրայ քո նորանոր սիրահարների հետ նստած, սիրոյ խօսքեր կըթոթովես, յիշիր, որ այնտեղ, ծովի

Թիւրքիա. Սահմանադրութիւնից առաջ վաճառք հարէմի համար:

նեղով, ես հազիւ-հազ կարողացայ ուշն հաւնել և մինչև առաւօտ, առանց հանւելու անկողնից վրայ ընկած, ես լալիս էի իմ ծաղրած, ոտնակոխ եղած, պղծւած սիրոյս վրայ...

IX

Մնաս բարով, անգի՛նս, վաղը ես այլ ևս կենդանի չեմ լինիլ. ինձ հետ միասին ես կըթաղեմ ծովի անյատակում, անվերջ քնով ննջում է մէկը, որն անսահման սիրով սիրում էր քեզ և այդ սիրողն էլ մեռաւ...

—

Մնաս բարով, անգի՛նս...

Դու խորտակեցիր իմ կեանքս, բայց ես չեմ անիծում քեզ...

Երջանի՛կ եղիր...

Վաղ. Թումանեան

ԽՃՈՂՆԵՐ

Գիշերայ մութը կոխելուն պէս Հին Դերեզմանները այցի էին գալիս գիշակերները. Քեալաշ Ղօլլօն, Մալքեաշ Բօբօն, Ղասբի Սալլաղը, Աղջու Մալլաղը, Մուրատաո Ալանը, Սաղսաղ Կլլանը, Քարկեր Ղարօն, Կիրկուլ Սարօն, Գիրանկուլ Հասօն, Երկաթակուլ Ղասօն, Պողպատեաթ Մխօն, Սրաճանկ Բարսօն ու իրենց թայերը, սկսում էին ծանր քարերի տակից, թանձր որմերի միջից, բարձր հեղեղատների քանդուածքներից դուրս քաշել լաշեր ու ապահարար լափել։ Բթերը գերեզմերի մէջ խրած, ատամները ջղերի մէջ մխած, ժանիքներով կրճիկները սեղմած, մշալով ու վշալով ուտում էին։ Նրանք այնքան շատակում էին, որ չէին ծամում, այլ կլանում էին. այնպէս էին որկրովը քցում, որ կարծես թէ ամբարում էին, մթերում էին, որ շարունակ, տարէցտարի ուտէն։

Ագահութիւնը այնպէս էր ծակել նրանց աչքերը, որ թւում էր թէ կշտանալիք չունէին, եթէ նոյնիսկ ամբողջ Հին-Դերեզմանները կլանէին։ Այնտեղի քարը ու ապառաժը, հողն ու աւազը և հողի շերտերի կաւն ու ջուրը եթէ լցնէին իրենց ծակ ստամոքսը, պարձեալ յագենալու չէին։

Մթութեան մէջ այդ գազանները բոլորւած, գլուխները իրար դէմ բռնած, աչքերն իրար ուղղած անվերջ կլանում էին, իրարից յափշտակում էին աւարը, և քանած քաղաքում ոչոք չէր էլ հետաքրքրւում, թէ ինչ խնճոյքի մէջ էին Հին-Դերեզմանների գիշանոցի վրայ յարձակուղ այդ բորենազգի պատառողները։ Մըկրատի նման սուր ակռաները, կոր ժանիքները և պինդ աղօրիքները անվերջ ջլատում էին, փշրում ամէն բան, ներս էին լցնում։ Իսկ զէշերի գլխին բազմածները կոչնականների նման չէին էլ ուզում տեղերից շարժւել, անվերջ շարունակելով իրենց աւարը։ Անխռով լափում էին և անհոգ կլանում։

Վաղուց Բարակ Նօղօն հոտ էր առել, թէ ինչ խրախճանքի ու հրճւանքի մէջ էին իր արհեստակիցները։ Դեռ շատ վաղ նա էլ սրել էր ժանիքները, որ դմակ կտրէ, թնդխուց միս պոկէ, բայց կօլլօները նըրան թոյր կը թողնէին, որ ճարպի պատառ կարողանար քաշել ու կուլ տալ։ Քանի՛ քանի՛ անգամ ջրակալւած բերանով, թուքը շրթունքներից թափելով, նա մօտեցել էր, որ պատառ առնէ, բայց այնպէս էին նրա վրայ յարձակւել, այնպիսի չուած աչքերի էր հանդիպել, այնպիսի սուր ժանիքներ էին ցոյց տւել, որ վախից չէր կարողացել կօլլօների խմբին մօտենալ։

Ու բորբոքած Նօղօն անվերջ ճղռտացել ու հաչել էր, որպէսզի իր աղմուկով ստիպէ ցեղակիցներին իրեն էլ ընկերացնել այդ խրախճանքին։ Քանի՛ քանի՛ անգամ կօլլօները վրայ էին տւել, որ բզկտեն բարակին և ձայնը ականջներից կտրէ, բայց նա այնպէս ճարպիկութեամբ ստոթացել ու փախել էր, որ միմիայն կօլլօների խմբի զայրոյթն էր սաստկացրել։ Բայց երբ խրախճանաւորները վերադարձել էին աւարի սեղանին, բարակը դարձեալ մի անկիւնից մօտեցել ու անվերջ շարունակել էր հաչոցն ու ոռնոցը։

Նօղօյի ձայնը, բարձրացրած աղմուկը, թէև Հին Դերեզմանների շուրջը ապրողներից շատերի քունը խանգարում էր, բայց ոչոք չէր հետամտում. ամենքն էլ գիտէին, որ կօլլօների ժանիքներից բան չըփախցնող քօթօթները և՛ կոռնան, և՛ կը վնգստան, և՛ կը հաչեն։ Այս մտածելով էլի գլորւում էին իրենց խոր քունը, առանց ուշք դարձնելու բարակի աղմուկին։

Բայց բարակն ամբողջ ոյժն ամփոփած՝ անվերջ այնքան հաչեց և ոռնաց, այնպէս վնգստաց, որ շատերի քունը իսպառ կտրւեց, որոնք շատ անգամ դուրս էին գալիս քննելու Նօղօյի ոռնոցի պատճառները։ Ժուռ աչքերն ու ականջները զննում էին, թէ ինչպէս կօլլօները խժռում էին ու կլանում ժանիքների տակն ընկածը, տեսնում էին թէ ինչպէս լափում էին, զգում էին, թէ ինչի էր իրենց քունն ու անդորրութիւնը խանգարում բարակը, բայց արհամարհելով թողնում, անձնատուր էին լինում մրափին։

Բարակի սիրտը մորմոքած, թոքերը ծակծկւած, օրէցօր ատամկացնում էր թէ հաչոցը և թէ ոռնոցը, կարծես ուզում էր քաղաքացիներին հասկացնել, թէ այդ ոկրամոլ և ագահ բորենազգիներին լեշերը ըսպառելուց յետոյ, պիտի սկսէին կենդանիներին էլ քաշել ու լափել։ Հին Դերեզմաններից կամաց կամաց նորերին էին անցնելու և այդպէս թաղերը և տները մանելով, ոչ միայն անասուններին, այլ ատամներին էլ պիտի բզկտէին ու խժռէին։

Եւ տների մէջ այնքան շշուկ ու մրթմրթոց բարձրացաւ, որ գիշակերը կասկածելով, թէ իրենց գլխին փոթորիկ կարող էր բարձրացնել բարակը, երկար խորհրդակցութիւնից և տատանումներից յետոյ, մի գիշեր հասա ողնաշար գցեցին նրա ատամների տակ, որ լափէ ու ձայնը կտրէ։

Բարակը սկզբում քիչ զրմռտաց,—դժգոհ էր բաժնից,—բայց գրգռած ախորժակը նրան ստիպեց դունչը խրել գոմշի մսի մէջ և կտրտել։

Եւ Նօղօյի ոռնոցը դադարեց։

Ժուռները աւելի եռանդով շարունակում են իրենց խրախճանքը, քանի որ բարակի բերանը մի ողնաշարով փակեցին և ո՛չ միայն ոռնոցից ազատւեցին, այլ դրացի ժողովրդի հետամտութիւնից էլ ապահովւեցան։

Աւետիս

ԻՄ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆԻՑ

Անգութ եարըս երբ ոտնատակ
Տրաւ վերջին իմ սէրը,
Այն օրւանից խորտակւեցին
Իմ վարդագոյն յոյսերը։

Էլ ես քնաւ չէի երգում,
Յոգնած էի ու տրկար։
Սիրտըս եարոտ, սիրտըս կարօտ՝
Քնած էի ես երկար։

Բայց դու եկար, ինձ զարթեցրիր,
Նորոգեցիր վէրքերս,
Սէրս նորից դու վառեցիր,
Նորոգեցիր երգերս։

Յարութիւն Թումանեան

Ազատ թրքուհին ամառոցում մէջ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱԼԻՓ

Ինչպէս լրագրութեան մէջ կարդում ենք, թիւրքական մինիստրութեան առաջադրութեան համաձայն, Օսմանեան Մէբուսան-Մէջլիսը (պատգամաւորական ժողովը) վերաքննելու է Միհդատեան Սահմանադրութիւնը: Յայտնի բան է այս ուրախառիթ լուրը պիտի ոգևորէ ոչ միայն Օսմանեան պետութեան ամբողջ ազգաբնակութեան, այլ և այն բոլոր ցեղերին, ժողովուրդներին ու պետութիւններին, որոնք առնչութիւն ունեն այդ երկրի հետ:

Այս պատճառով Կովկասի հայ ընթերցողների, մանաւանդ թիւրքահայերի լուրջ ուշադրութիւն ենք հրաւիրում հետևեալ էական կէտերի վրայ, առանց որոնց ուղղութեան Օսմանեան Մէբուսան-Մէջլիսի և ժողովրդի ճիգերը միշտ խեղդելու են ոչ միայն ի զօրս վտանգ ազգութիւնների, այլ և ընդհանրական բոլոր ազգաբնակութեան, հետևաբար դրացի պետութիւնների և ժողովրդի:

Միհդատեան Սահմանադրութեան 3—4 և 7-րդ յօդւածը Օսմանեան պետութիւնը դրել է երկուութեան մէջ, որով մի մեծ անդունդ է բացել իսլամ և ոչ իսլամ ժողովրդի միջև:

Այս երկուութիւնը մի այնպիսի դայթակղութեան քար է, որ կամայ թէ ակամայ անվերջ հակառակութիւնների և հակասութիւնների առիթ է դառնալու:

Համաձայն 3-րդ յօդ. Օսմանեան վեհապետի անձի վրայ միացած է Իսլամի Գերագոյն Խալիֆութիւնը, որով վեհապետը (յօդ. 4) իսլամի կրօնի պաշտպանն է: Հետևաբար սուլթանը թէ աշխարհական երկրի պետն է և թէ իսկապէս գերագոյն դեկավարն է յաջորդաբար և ժառանգաբար:

Այս յօդւածներն ի նկատի առնելով, եթէ Մէբուսան-Մէջլիսը որևէ քայլ առնէ իսլամի հիմնական, բայց մաշած և անտրդար օրէնքների դէմ, խալիֆը որպէս գերագոյն դեկավար չըպիտի կարողանայ վերջին իշխանութեան հակառակ վարուել և ընդհակառակը: Մանաւանդ թէ 7 յօդ. համաձայն վեհապետը պարտաւոր է հսկել, որ շէրիաթի և օրէնսդրութեան տրամադրութիւնները գործադրուեն:

XX-րդ դարում մի երկիր, քառասուն—յիսուն ազգութիւններից, լեզուներից և կրօններից կազմուած, կառավարել այդքան ժամանակ առաջ հրատարակուած մի սահմանադրութեամբ, դա այնպիսի կարկատան կըլինի, որ շատ կարճ միջոցում կըպատառուի և կըթափի: Մանաւանդ շէրիաթը, որը բացարձակ երկնային որոշումով իսլամի հետևողներին տիրող և ճնշեալ կրօնակիցներին պատկանողներին սարկական—ռայայի վիճակին է դատապարտած: Շէրիաթի համաձայն Ռայային շնորհ է եղած կեանքը միայն այն պայմանով, որ նա ծառայէ իսլամի զաւակների բարօրութեան *):

Կրօնը կօմպրօմիսներ չի կարող անել, մանաւանդ իսլամի սիւնին վարդապետութիւնը: Հետևաբար եթէ, Մէբուսան-Մէջլիսի վճիռների համաձայն, վեհապետը զիջումներ անէ, իսլամի հետևորդների և կղերի հայեացքով նա կընկնէ խալիֆական աստիճանից, իսկ եթէ շէրիաթի պաշտպան հանդիսանայ, Մէբուսան-Մէջլիսի վճիռների հակառակ վարուի, այն ժամանակ ազգաբնակութեան ներկայացուցիչները պիտի ոչնչեն նրան տապալել, որ իրենց որոշումը գործադրել տան:

Յայտնի բան է, մի այսպիսի երկդիմի սահմանադրութեան չի կարող գործադիր հանդիսանալ և ոչ մի իշխանաւոր, քանի որ օրէնսդրութիւնը պարտա-

*) Տես մեր Խալիֆէթ երես 61, Ղուրան VIII սուրիա Ինֆաալ 68—72:

ւորեցնում է նրան երկուսին էլ ծառայելու, երկուսն էլ գործադրելու։

Գուցէ առարկեն, թէ Օսմանեան Մէրուսան-Մէջլիսի և Շերակոյթի առանձնակի կամ ընդհանուր ժողովները կրկարողանան այնպիսի ընթացք բռնել, որ օրէնսդրութիւնը երբէք չհակասէ շէրիաթին։ Այդ դէպքում օրէնսդրութիւնը երբէք չի կարելի հաւասարութեան և արդարութեան վրայ հիմնել, քանի որ շէրիաթի հիմնական և էական հատուածները ոտյային զրկած են իսլամի հետևողների հետ հաւասար արտօնութիւններ վայելելու, որի դէմ իսլիֆը, գերագոյն դէնպետը, չի կարող մեղանչել։

Յայտնի բան է, հիմնուելով XIX-րդ դարում արքւած Խաթը-Շէրիֆին, Հիւմայիւնին և այլ ու այլ հրովարտակներին և Միդհատ. սահմանադրութեան 8, 9 և 17 յօդուածներին, երկրի ամբողջ ազգաբնակութիւնը առանց կրօնի և ազգութեան խտրութեան պիտի կոչուէն օսմանցի, հաւասար իրաւունքներ պիտի վայելեն

Ազատ թրքուհին

և հաւասար պարտականութիւններ պիտի կրեն։

Բայց վեհապետը խալիֆութիւնը իր անձի վրայ կրելով, շէրիաթի պաշտպանութեանը պարտաւորելով, չըպիտի կարողանայ ոչ վերև յիշած հրովարտակները գործադրել և ոչ էլ սահմանադրութեան 8, 9 և 17-րդ յօդուածները։ Եթէ սահմանադրութեան այս կէտերը

գործադրէ, խալիֆական իշխանութեան դէմ պիտի մեղանչէ և երկրի ազգաբնակութեան 60 տոկոս մահմեդականները նրա իշխանութեան դէմ պիտի գնան և 120 միլիոն օտար երկրներում ապրող սիւննի ժողովուրդը չըպիտի յիշէ նրան իր աղօթքներում, որպէս գերագոյն գենպետ (իմամ)։

Երկուութիւնը վեհապետին պիտի թողնէ երկու կրակի մէջ նա անճարացած դարձեալ պիտի կեղծէ, ինչպէս պարտաւորւած էին սուլթանները կեղծելու ամբողջ XIX-րդ դարում թէ ներքին գործերում և թէ արտաքին քաղաքականութեան մէջ։

Այս պարագան ի նկատի ունենալով, Օսմանեան երիտասարդութիւնը—«Միլլեաեան եւ յառաջադիմութեան» պաշտպանները պիտի ջնջէին սուլթանի խալիֆութեան տիտղոսը, երեսները պիտի շուռ տան շէրիաթից և միասիրտ, միահոգի պիտի ձեռնամուխ լինեն երկրի վերածնութեան սուրբ գործին։

Աւետիս

ԴԱՂԱԴԱԳՏԱՆԱՆ

Եւրոպական մամուլը շեշտում է էդւարդ Թագաւորի գահական ճառը, որ նա օրերս արտասանեց Բեռլինից վերադառնալուց յետոյ։

Գերմանիայի առաջադիմութիւնը և օր օրի վրայ հզօրանալն ամենից աւելի զգալի էր, ի հարկէ, Անգլիային և ահա սա ամեն կերպ ջանում էր իր մրցակցին նսեմացնելու։ Անգլիան մոռացութեան տուաւ Ֆրանսիայի հետ դարաւոր իր հակառակութիւնը ու չըհամարելով նրան այլևս իր սիրոյհան, մրցակից արևելքում, բարեկամութեան դաշն կապեց հետը։ Ուժեղացնելով իրան հեռաւոր արևելքում, դաշն կապելով Ճապոնիայի հետ, Անգլիան միաժամանակ սերտ բարեկամական յարաբերութիւն և համաձայնութիւն հաստատեց Ռուսաստանի հետ էլ։ Շատերը համոզւած էին, թէ Անգլիան միանալով Ճապոնիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ, Գերմանիային չետ կըմղէ և թոյլ չի տալ արևելքում հաստատւելու։ Սակայն Վիլհելմ Պարսկաստանի և ապա Տաճկաստանի սահմանադրութիւնները առաջ մղելով, մի հարւածով Անգլիայի Ռուսաստանի հետ Պարսկաստանը կիսելու թէ ախորժակը փակեց և թէ իր բարեկամ սուլթանի ճգնաժամին այնպիսի խորհուրդ տուաւ, որ աշխարհը ճնշց ապշած։

Սուլթան Աբդիւլ-Համիդ

Շատերը Տաճկաստանի սահմանադրութիւնը վերագրում են բացառապէս յեղափոխական կազմակերպութիւններին. այդ սխալ է և արդէն ապացուցւած, որ Բեռլինում երեք օր առաջ գիտէին, թէ սուլթանը սաորագրում է սահմանադրութեան ակտը։ Յամենայն դէպս պերմանական դիւանագէտներին էին աշակերտել յեղափոխած տաճիկ գործերը...

Այս անցած աշնան էլ անգլիական լրագրների մերկացումները և Վիլհելմին անպատւելը դարձեալ չունեցան ոչ մի օգուտ, եթէ ոչ էդւարդի իր ոտով Վիլհելմին գալը, երբև թէ նրա յիսնամեակի առիթով, և ազգակցական կապերից դուրս մի շարք քաղաքական հանգոյցներ կապելը։ Սրանցով Աւստրիան էլ ստանում է բաւարարութիւն. Բոսնիայի, Հերցեգովինայի վէճն էլ խաղաղ լուծում ստանալով, բալկանեան իշխանութիւնների յարաբերութիւնները աւելի է պարզւում։

Անգլօ-գերմանական համաձայնութիւնը նպաստաւոր է Ռուսիայի համար այն տեսակէտից, որ մեր քայքայւած տնտեսական վիճակը մի փոքր կարող է բարեփոխւել։ Քանի որ Ռուսաստանը դեռ անկարող է շահագործել իր բնական հարստութիւնները, ցանկալի է ուրեմն, որ օտար տարրերը շատ զբաղւեն մեր երկրի բերքերով և իրանց դրամներով շահւեն թէ իրանք և թէ շահեցնեն ու շէնացնեն մեր աշխարհը։

Չմիւռնիա.—Տաճկական չրերում

Նկար Ցովհաննէս Այվազովսկու. Փոթորիկ Սեւ ծովի վրայ:

ՄԵՐ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԸ

Տասնիններորդ դարու երկրորդ կիսամեակից Թիֆլիսն աւելի և աւելի է սկսում հայկական կենտրոն լինել շնորհիւ գաւառացի և գաղթական հայերի։ Բնիկ հայ Թիֆլիսցիները դեռ նիրհում էին, իսկ վրացիները նիրհելուց զատ, ձգտում էին պահպանել իրանց ազնւատոհմին իբրև թէ յատուկ կենցաղ։ Պճնւում էին Հերվիէների, Տօլէների, Բերլօմոնների վարսաւիրանոցներում, մօդայի դերձականոցներում զուգւում, փայլում միայն ըստ արտաքուստ։ Եւ մինչդեռ փոխարքայ Վօրօնցովը իր ճոխ պարահանդէսներով իւրաքանչիւր տարի հմայում էր այդ ազնւատոհմերին, որոնք մէկը միւսից աւելի փարթամ երևալու համար գրաւ էին դնում այդ Տօլէներին, Հերվիէներին ոչ միայն իրանց գոհարէղէններն ու ոտհմային հնութիւնները, այլ և անշարժ կալւածքները, տներն ու այգիները, վարելահողերն ու անտառները,—հայերն արդէն սկսել էին աչքները բանալ։

Վօրօնցովի բարեկամ երջանկայիշատակ Ներսէս V-ի հիմնած Ներսիսեան դպրանոցը աճում էր Գաւառացի և Տաճկահայաստանից, Հնդկաստանից գաղթած, դպրոցներ աւարտած երիտասարդութիւնը լուսամիտ, աշխարհ տեսած վաճառականների աջակցութեամբ բանում է թէ Թիֆլիսում և թէ գաւառներում նոր բանոր դպրոցներ, գրադարաններ։ Թատրոնը գաւառներումն էլ սկսում է հետաքրքրել երիտասարդութեան։

Եւ, որ աչքի զարնողն է, իսուհնական թեականներին Ղարաբաղը իր շէն ու կենսունակ Շուշի քաղաքով հզօր կերպով մրցում է Թիֆլիսի հետ ոչ միայն վաճառականական, այլ և դպրոցական ու կուլտուրական ասպարէզներում։ Ներսէս V-րդ հիմնում է Ներսիսեան դպրանոցը Թիֆլիսում, Բաղդասար միտրօպօլիտ (Գանձասարի կաթողիկոսական աթոռի վերջին ժառանգ) Հասան-Ջալալեանը հիմնում է Ղարաբաղի թեմական դպրանոցը և ապահովում մի քանի միլիօն արժեցող վարելահողերով, անտառներով, հանքերով և գիւղօրայքով։ Իսկ քաղաքում իր սիրելի հօտի հետ հայրաբար վարւելով, ժամանակի ոգու թելադրութեամբ հազար ոսկիներով վերցրած աջահամբոյրը դպրոցի կառուցման վրայ է ծախսում։

Ներսէս V հաստատում է Թիֆլիսում արհեստաւորների միութիւն—համքարութիւնը, նոյնը անւում է և Շուշում, որ գոյութիւն ունի մինչև օրս էլ։

Սակայն Ղարաբաղը մի մեծ առաւելութիւն ունէր Թիֆլիսի համեմատութեամբ. ժողովուրդն այնտեղ հայախօս էր, աւելի ուժեղ, սրամիտ և աչքաբաց։

Ղարաբաղցի հայը մեծ թւով իր զաւակներին ուղարկում է Թիֆլիս գիմնազիօն մտնելու և ապա Մոսկւա ու արտասահման։

Եւ ահա տարէց-տարի հասունանում են սերունդները, որոնք սկսում են սպասաւորել հայրենիքին և նրա զաւակներին ոչ այսօրւայ նման նեղ, նիւթապաշտական, եսական հակումներով։

Տարազի ներկայ համարից բանալով XIX-րդ դարու երկրորդ կիսամեակից մինչև այժմ էլ դեռ հասարակական ասպարէզներում կանգնուն մեր վետերանների պատկերներն ու թռուցիկ կենսագրութիւնները, նախամեծարութիւն տալիս ենք նախ նրանց, որոնց գործնէութեան յիսնամեակը լրանում է ներկայ 1909 թւին։

I

ԲԺՇԿԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՍՊԱՐԵԱՆՑ

Յիսնամեայ բժշկական գործնէութեան առիթով (1859—1909)

Բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցը ծնւել է 1837 թ. Շուշում և սկզբնական ուսումն էլ առել այնտեղ։ Տասներկու տարեկան էր, երբ մեծ եղբայրը, որ Շուշում պետական գանձարանապետ էր, ուղարկեց Յովհաննէսին Թիֆլիսի ազն. գիմնազիան։ Այստեղ փառաւոր աւարտելով, գնում է Մոսկւա, մրտնում համալսարանի բժշկական մասը և քսաներկու տարեկան հասակում 1859 թ. մայիսին աւարտում ուսումը ու մտնում Եկատերինեան կլինիկը, ընտրելով իրան մասնագիտութիւն ներքին հիւանդութիւնները։ 1868 թ. մեկնում է Գերմանիա և մնում այնտեղ մինչև 1871 թ., լրջօրէն լսում առաջնակարգ պրօֆեսորների, միաժամանակ պարապելով կլինիկում։ 1871 թ. վերադառնալով Մոսկւա, պաշտպանում է բժշկապետութեան աստիճանը ստանալու համար դիսերտացիան և նոյն թւին էլ Թիֆլիս գալով հաստատւում այստեղ նախ իբրև օգնական Միքայէլեան հիւանդանոցի գլխաւոր բժշկի, ապա պաշտօնը թողնելով, ամբողջովին պարապում է աղատ պրակտիկայով։



Բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցը

Բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցի հռչակը իբրև հմուտ բժշկի տասնեակ տարիներից ի վեր տարածւած է ոչ միայն Թիֆլիսում, այլ և նրա սահմաններից էլ շատ դէնը Կովկասում։ Իւրաքանչիւր մասնագէտ գիտնականի նման, բժշկապետ Գասպարեանց յաճառ է և վերին աստիճանի մանրակրկիտ։ Վայ է, եթէ նրա, ըստ երևոյթին ամենաչնչին, պատւէրը հիւանդը չկատարեց, այլևս ոչ մի կարեկցութիւն, ոչ մի գութ։ Եւ հէնց շնորհիւ այդ տեսակ բնաւորութիւնների է, որ մարդկանց կարելի է լինում հասկացնել, թէ չէ կարելի մեղանչել գիտութեան դէմ և վարկաբեկ անել նրա անձնուրաց սպասաւորներին, աղաւաղելով գիտութեան որոշումներն ու եզրակացութիւնները։

Բժշկապետ Գասպարեանց սերտ կապւած է և իր ծննդավայր Շուշու հետ և մինչև վերջին տարիներս շատ ամառւայ ամիսներ անց էր կացնում Շուշում և

իր հայրենակիցներին բժշկական օգնութիւն հասցնում։ Իսկ այն տարիները, երբ ամառը նա Շուշի չէը գնում, արդէն մեկնում էր արտասահման՝ նորանոր տեղեկութիւններ ամբարելու իր մասնագիտութեան վերաբերեալ։ Մինչև օրս էլ բժշկապետ Գասպարեանց շարունակ կարդում է իր մասնագիտութեան վերաբերեալ ամեն մի նոր լոյս տեսած հրատարակութիւն և լրջօրէն հետևում գիտութեան։

Ջունեենալով ակտիւ մասնակցութիւն հասարակական մեր գործերում, այնուամենայնիւ բժշկապետ Գասպարեանց այս կամ այն ազգային-հասարակական երևոյթների ժամանակ միշտ բռնել է շատ որոշ դիրք, և անընկճելի է իր համոզումներով։

Տ.

Տ. ՍԻՐԱՆՈՑԻ ՕՐՔԵԼԵԱՆԸ

Յունուարի 24-ին Բագուում հրաշափառ հանդիսով Նիկիտինի կրկէսում մեր տաղանդաւոր արտիստուհի տ. Սիրանոյշի 35-ամեայ բեմական բեղմնաւոր գործունէութիւնը դրւատուեց։

Կրկէսը թէ արտաքուստ և թէ ներքուստ պճնւած էր դափնիներով, եղևնիներով և լուսաւառած էլէքտրիկ գոյզգոյն լապտերներով։ Յաղթական կամարի տակից յօբելեարուհին թատրոն մտաւ հազարաւոր ծափահարողների ուղեկցութեամբ։

Ներկայացւեց Ջուդերմանի Հայրենական տուն և Սարդուի Տօսկա դրամաներից մի մի գործողութիւն և ապա ապաթէոզ։ Մելպոմենան, իր քնարով, երկու Քերովբէ դափնին ձեռներին պահում են յօբելեարուհուն։ Բեմի ձախ կողմում մի փոքր ամբիոնի վրայ տերևներից հիւսած մի պսակ է կանգնած, որի շուրջն էին պատգամաւորները։ Տ. Հրաչեայ, որ 35 տարի առաջ տաճամեայ Սիրանին գցել է թատրոնական փշալից բեմը, այսօր նրա ճակատը պսակում է դափնիներով։

Յօբելեարուհին ծնկաչոք ընդունեց այդ պսակը, համբուրելով դաստիարակչուհու ձեռը։

Պատգամաւորութիւններ կային մեր գրական, դպրոցական, հասարակական, բարեգործական հաստատութիւններից և ընկերութիւններից։

Բացի ուղերձները, ստացւել էին և 553 շնորհաւորական հեռագիրներ։

Աղբիւր-Տարազ-ը շնորհաւորեցին տաղանդաւոր յօբելեարուհու բեղմնաւոր գործունէութիւնը իրենց ներկայացուցչի՝ տ. Աննա Նազարեան-Բուդաղեանի միջոցով, որն արտասանեց և մատոյց մեր հետևեալ ուղերձը՝

Ե՞րեսունհինգ տարի...

Ե՞րեսուն հինգ տարի սիրել և տանջւել...

Երեսունհինգ տարի զգալ, յուզւել, կսկծալ, խանդն ու զգիւրը, ուրախութիւնն ու վիշտը շաբան-շարան արած, խարդաւանանքների անդունդներից ընթանալով, խոչընդոտները պատւանդանների զարձրած բարձրանալ երկինք գեղեցկի և սիրոյ աստւածներին պաշտամունք կատարելու, յիրաւի միայն անմահներին է յատուկ, դիցուհի։ Եւ գեղանի եթերում աստւածների հուր ու կայծով մկրտւած, դիցուհի, դուք ձեր սրբազան ամբիոնից ցոյց տւիք թէ զաւակակորոյս գորովագութ մօր անհատական սէրը և թէ նոյն մայրական սիրով բորբոքւած կնոջ զոհաբերութիւնը, երբ սրբազան հայրենիքի պատիւն ու ազատութիւնը պահանջում էին սրաթեկ անելու սրտիդ հատոր զաւակիդ։

Իսկ այժմ... երեսունհինգ տարի տանջւելուց յետոյ լինե՞լ, թէ չլինել, անշուշտ ինքներդ ձեզ, վաստակաւոր յօբելեարուհի, հարց էք տալիս։

Լինել, դիցուհի, լինել... և անընդհատ շարունակել տանջւել ու սիրել։

Ապրեցէք ուրեմն դեռ երկար տարիներ, սիրելի արտիստուհի, տանջւելու համար։

Ջէօր աստւածներից ընտրւածներիդ է միայն հասկանալի և արժան սուրբ տանջանքն ու սէրը։

Ապա տ. Աննա Նազարեան-Բուդաղեան յայտնեց յօբելեարուհուն, որ Լիսբոնի գրականագէտների, արւեստագէտների եւ խաղաղութեան միջազգային մնայուն կոմիտէն լսելով համայն Ռուսիայի համար իր լիազօր ներկայացուցիչ պ. Տ. Նազարեանի զեկուցումը տաղանդաւոր հայ արտիստուհու մասին, որոշեց յարգելի յօբելեարուհու պատկերը մտցնել միջազգային արւեստագէտների պատկերների ալբոմում նշանաւոր արտիստների շարքում և մատոյց տ. Սիրանոյշին և այս մասին գրութիւնը։

Յօբելեարուհին իր շնորհակալիքը յայտնելով իրան դրւատողներին, դէպի հասարակութիւնը դառնալով ի միջի այլոց ասաց՝ «որ 80-ական թւականների հայ բեմի մթին ճակատի վրայ շողացող աստղերի յիշատակը դեռ ապրում է իր մէջ։ Սիրում է եւ փայփայում հայ բեմը եւ պատրաստ է իր դաղրած ճակատով մնաքառել նրա հակառակորդների դէմ»։

Հանդէսը վերջացաւ կէս գիշերից էլ երկու ժամ անց։ Յօբելեարուհին ստացաւ ծաղիկներ և թանկագին ընծաներ։

ԱՂԲԻՒՐԻ ՕՐԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Աղբիւրի 25-ամեայ յօբելեանի նկարագրութեան մէջ (Տարազ № 1) սխալմամբ բաց է թողւած Թիֆլիսի Թանդոյեան օրիորդաց դպրոցի հոգաբարձական և մանկավարժական խառն ժողովի որոշումը՝ երեք տանուհի պահելու դպրոցում խմբագիր Տ. Նազարեանի անունով։ Բացի սրանից, սխալմամբ յիշատակւած չէ պ. Մակար Ջմշկեանի Թիֆլիսի բարբառով գրած ոտանաւոր-ձօնը, որ Թիֆլիսցու տարազով կարդաց մեր շնորհալի դերասան պ. Մերաղեանը և մեծ հաճոյք պատճառեց հանդիսականներին, նմանապէս և աշըղ Ջիւանու ոտանաւորը։

Որովհետև յօբելեանական յանձնաժողովը իր վերջին նիստում որոշել է առանձին գրքով լոյս ընծայել յօբելեանի առթիւ ստացւած բոլոր հեռագիրները, ուղերձները, շնորհաւորական նամակները, նմանապէս և ճառախօսութիւնները, գաւառական դպրոցական հանդէսների նկարագրութիւնները, բարեգործական և դպրոցական հաստատութիւնների որոշումները և այլն և այլն, ուստի թող ներւի մեզ Տարազում՝ մեր չարձանագրելը այդ բոլորի մասին։

Ուրբաթ, յունուարի 30-ին, Մեղու ընկ. վարչ. նախագահուհի տիրուհի Մինասեանց և նոյն ընկ. ուսումնարանի տեսչուհի տ. Գայիանէ Բուդաղեանց շնորհ բերին մեր խմբագրատունը, հետները բերելով Աղբիւրի քսանհինգամեակի առիթով խմբագրի անունով վերցրած սանուհուն՝ օր. Սոֆիա Եսայեանին և ծանօթացրին պ. Տիգրան Նազարեանի հետ։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Յարութիւն Թումանեան. «Խօլեր», վոդեվիլ մէկ պրարւածով. երկրորդ տպ., բարեփոխած։

Դա նոր գիրք չէ, միայն երկրորդ տպագրութեամբ է վերջերս լոյս տեսնում։

Առաջին անգամ այդ վոդեվիլը տպագրւեցաւ «Տարազում» 1892 թ. և ներկայացւեցաւ Թիֆլիսի ազնւականների թատրոնում 1893 թ.։ Դրանից յետոյ անցել է գրեթէ 15 տարի և այս գիրքը նոր է լոյս տեսնում երկրորդ տպագրութեամբ։ Դա շատ նշանակալից երեւոյթ է հայ գրական շուկայի պահանջը բնորոշելու համար։

Վոդեվիլը բաւականին յայտնի է, այնպէս որ նրա մասին աւելորդ եմ համարում երկար խօսել։

Խօլերի երկիւղը, որով բռնւում են առհասարակ շատերը, ոչ թէ կարող է ապահովել տարափոխիկ հիւանդութիւնից, այլ աւելի վնասել։ Այդ եզրակացութիւնն առնելով, Յար. Թումանեանը իր վոդեվիլում պատկերացնում է Ղազարի երկիւղը խօլերի տարին և դրանից առաջացած կոմիքական դրուքիւնը։ Երկրորդ տպագրութիւնը հեղինակը բարեփոխել է, բայց ոչ տեսարանները, այլ լեզուն և դարձւածքները։

Դէպքից օգտւելով, չենք կարող մի քանի խօսք չասել և մի այլ վոդեվիլի մասին, որը կրում է նոյն «Խօլերը» վերնագիրը և պատկանում է Փառնակէսի գրչին։ Պ. Փառնակէսը իր վոդեվիլի նիւթը, ճիշտ է, պատճենում է ուրիշ հանգոյցի շուրջը, բայց անցքը պատահում է նոյն խօլերի տարին և տեղ-տեղ վոդեվիլի ամբողջ տեսարանները, նոյն իսկ նախադասութիւնները յիշեցնում են պ. Թումանեանի «Խօլերը»։ Այդպէս Թումանեանի պիէսի սկզբում գլխաւոր դերակատարը կարդում է լրագիր և լսում է խօլերի կոտորածի մասին, նոյնը կայ և Փառնակէսի վոդեվիլում։ Պ. Թումանեանի վոդեվիլում ծառան սրսկում է պուլվերիզատորով, նոյնը և Փառնակէսի գրւածքում ֆելդշերն է սրսկում աննեափի չորս կողմը և Ղազարի վրայ։ Ի հարկէ այդ հետեւանքն էլ լինում է այն, որ Ղազարը (գլխաւոր հերոսը) ասում է նոյն խօսքերը, ինչ որ Թումանեանի վոդեվիլում։

—Նա՛, էս ինչ է, չան հոտ է, փիւֆ, փիւֆ...

Մենք չենք ուզում բերել մի շարք այդ տեսակի «զուգադիպութիւններ», եթէ չասենք աւելին, ինչ որ նկատւում է Փառնակէսի վոդեվիլում. կասենք միայն, որ պ. Փառնակէսը, երևի նկատելով իր «զուգադիպութեան» մեղքը, աշխատում է արդարանալ նրանով, որ իր վոդեվիլի ճակատին մի երկու խօսք է նւիրում այդ առթիւ։

Նա ասում է. «այդ վոդեվիլը գրել էինք անցեալ 1892 թ. խօլերայի ժամանակ. պատրաստւում էինք իր ժամանակին հրատարակելու, երբ լոյս տեսաւ պ. Թումանեանի «Խօլեր» անունն մի գործողութեամբ վոդեվիլը, որը սակայն մինչև օրս էլ ոչ ներկայացնելիս ենք տեսել և ոչ կարդացել»։

Իսկ եթէ ասենք, որ Փառնակէսն իր գրքոյկը տպել է 1905 թ., պարզ կըլինի թէ ո՛վ ումից է վերցրել «զուգադիպութիւնները»։ Փառնակէսը ուզում է մեզ հաւատացնել, որ չի տեսել և չի կարդացել նոյն անունը կրող վոդեվիլը։ Հաւատանք արդեօք։ Ճիշտ է, գրականութեան մէջ տեղի ունենում են վերնագրի զուգադիպութիւններ, օրինակ՝ մենք ունենք երկու «Արշակ Բ.». Գալֆայեանի և Պէշիկթաշլեանի, երկու «Վարդանանց պատերազմ՝ Կարինեանի և Տիրացեանի, բայց այդ երկու գրւածքներն էլ իրանց պատմական նիւթի շնորհիւ են մօտեցել մէկ-մէկու, բայց դրանց մէջ թէ ամբողջ նիւթի զարգացումը, թէ տեսարանները, նոյն իսկ տիպերը առանձին են և ոչ մի կապած մէկ-մէկուց վերցնելու տեղիք չեն տալիս։ Նոյնը նկատւում է և Գամառ-Քաթիպայի ու Ալիշանի «Վարդանանց մահը» պօէմներում, չընայելով որ մենք չենք քաշւում ասելու, որ Գամառ-Քաթիպան Ալիշանի ազդեցութեան տակ է գրել իր պօէմը։ Իսկ ինչ վերաբերում է կեանքից վերցրած գրւածքներին, այդպիսի «զուգադիպութիւնները» ինչ ասել կուզէ չըպիտի լինենք։

Ե. Սօլովեան։

Ուհիացի հայ կին

Առաքել Մնացականեանի լուսանկարներից ժողովածւից։

ՄԱՀԻՈՅԺ

ԱՌԱՔԵԼ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԻՑ

Փետրւարի 3-ին ս. Էջմիածնում վախճանւեց 38 տարեկան հասակում ուհիացի Առաքել Մնացականեանց։ Հանգուցեալն աւարտելով Գէորգեան ճեմարանը, մտնում է պատմա-փիլիսոփայական բաժանմունքը Մոսկւայի համալսարանի իրրև ազատ ունկնդիր։ Տնային պարապմունքներով դեռ չաւարտած ուսման ընթացքը, վերադառնում է հայրենի գիւղը՝ Նիժ։ Այստեղ օգնելով հօրը, միաժամանակ լրջօրէն զբաղւում է և գրականութեամբ, ազգագրական ճիւղի վրայ ուշադրութիւնը դարձնելով։ Ծողովում է ուհիական կենցաղին վերաբերեալ նիւթեր և պատկերներ, որ մտադիր էր մօտ ժամանակներս հրատարակելու։

Աշխատակցում էր մեր թերթերին և ունի Աղբիւրում տպւած փոքրիկ պատկերներ, իսկ Տարազում մի շարք ուշադրաւ պատմական յօդւածներ։

Առաքել Մնացականեանց խաղաղ բնաւորութեան տէր էր և սրամիտ։

Երկու տարի սրանից առաջ հեռացաւ Նուխուց, Գէորգեան ճեմարանում ստանձնեց գրադարանապետի և վերակացուի պաշտօն։ Հէնց այստեղ էլ մրսեց և աղիքների բորբոքումից վախճանւեց։

Մեր վաղամեռ այս աշխատակցի պատկերը տպագրւում է Աղբիւրի ակունքում։ Իսկ Տարազի ներկայ №-ում տպագրւած ուհիացի կինը հանգուցեալի ժողոված լուսանկարներից է։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՏԱԿՆԵՐ

Անցած 1908 թ. հարուստ էր յոբելեաններով և ցանկալի մեռնողներով։

Յոբելեանների մասին լրագրները շատ գրեցին, մինչդեռ ցանկալի մեռնողները ըստ արժանոյն չըլուսաբանեցին։ Մենք կամենում ենք այդ բացը լրացնել և չըհնազանդել հին առածին՝ «մեռածի մասին կամ լաւ եւ կամ ոչինչ»։

Մեռնում է անժառանգ մի վաճառական հայ Զոհրաբեան և իր ժառանգութիւնը կտակում ամենախաւար մի հայաշատ երկրում՝ Արտատականում, ուր նա դիզել է իր հարստութիւնը, կառուցանել միջնակարգ դպրոց։ Դրւատելու արժանի լուսամիտ կտակ։

Սակայն ինչ ասենք մի քանի օր սրանից յետոյ անժառանգ մեռած շուշեցի Միրզաջան Խաչատրեանի խաւարամիտ կտակի մասին։ Այս հանգուցեալը հարիւր յիսուն հազար րուբլու չափ կարողութիւն թողնում է ս. Էջմիածնայ սինոդի կարգադրութեան տակ, որ ամուսնուն սինոդը այդ գումարի տոկոսներից մինչև նրա մահը տարեկան 2500 ր. ապրուստ տայ, իսկ ճնացեալով բարձրագոյն դպրոցներում սինոդի բարեհայեցողութեամբ ուսում ստանան անշուշտ վարդապետացուներ։ Եւ այդպիսի մի մեռնողին թաղում են Թիֆլիսի Մողնու եկեղեցու բակում, որի ինտելիգենտ ծխականները ձէն ու ծպուտ անգամ չեն հանում և չեն դիմադրում հանգուցեալ Միրզաջանին այնտեղ թաղելու համար։

Ղարաբաղի թեմական դպրոցը, օրիորդաց ուսումնարանը ճգնաժամի մէջ, որբանոցը կարօտ նպաստների, շէն ու պայծառ իր ծննդավայր հիասքանչ Շուշին աւերակ, բնակիչները ցիր ու ցան եղած, ճնացորդները թշուառ, մերկ և քաղցած, ագուլեաց փառահեղ եկեղեցին ուր ինքը մկրտուել է, նրա շուրջը և հովանու տակ անցուցել իր մանկութիւնը, կիսաւեր, նրա կալւածքները եղբայրասպան օրերին կրակին լափ գնացած, չէ կտակում հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանը ոչինչ, այլ մնափառութիւնից դըրդուած կտակում է իր ստացւածքը սինոդին ոչ այնքան էլ այսօր անհրաժեշտ նպատակի համար։ Աւելացրէք, որ սովը Չէյթունում համաճարակի կերպարանք է ստանում և աղգընտիր հայրապետ Վեհափառ Իզմիրլեան իր անդրանիկ, հայրապետական կոչը յօդուտ այդ սովալուկներին է անում։

Բանի տարի սրանից առաջ գրաքանագէտ Ալէքսանդր Թարխանեան, Թատրոն հանդէսի հրատարակիչը հաշւապահութեան պաշտօն է ստանձնում այդ Մ. Խաչատրեանի հաթուխի նաւթային գրասենեակում և այնտեղ նահատակւում դրամաշորթներից, որովհետև նա հաւատարմութեամբ և անձնուրացութեամբ է պաշտպանում այդ Մ. Խաչատրեանի գոյքը։

Մեռնում է Ալ. Թարխանեան, թողնելով երիտասարդ ամուսնուն և անչափահաս տղին ու աղջկան առանց կոպէկի։ Եւ ինչ էք կարծում, այդ բարեհոգին իսկոյն իր հովանու տակն է առնում իր զոհի թշուառ ընտանիքը։ Ո՛չ. նա, այդ հարիւրհազարների տէր անժառանգ մարդը սակարկում է անբաղդ այրու հետ և պրոշներով է նրանց օգնութեան հասնում։

Բարոյական պարտականութիւն կայ սինոդի վրայ ամենից առաջ կանոնաւոր նպաստ տալ ցմահ Ալ. Թարխանեանի այրուն և նրա տղայ զաւակին թոշակ մինչև բարձրագոյն դպրոց վերջնականապէս աւարտելը և հաստատ պաշտօն ստանձնելը։

Հանգուցեալ Մ. Խաչատրեան ունի աղքատ-տնանկ քոյրեր էլ։ Մայր Աթոռը սիրտանք պիտի լինի և սրանց և իր արդար տնօրէնութեամբ պէտք է սրբագրէ և սրբագործէ այդ խաւարամիտ կտակը։

ՍՊԱՍՈՂ ԹԱՄԲԵՐ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

Գիւղատնտես պ. Ա. Աթանասեան, որ ազատ մամուլի օրերին Թիֆլիսում ձեռնարկել էր գիւղատնտեսական մի շաբաթաթերթի հրատարակութեան և խափանւել էր բանւորական գործադուլների ու արտաքին ճնշումների պատճառով, այժմըս նորից աւելի հաստատ հիմունքներով, ընկերակցութեամբ հայ մասնագէտների և ծժանդակութեամբ մեր բարեգործական հաստատութիւնների, համակրողների յունւարի 25-ից սկսել է հրատարակել «Գիւղատնտես» շաբաթաթերթը։

Հանրամատչելի բովանդակութիւնը, չնչին բաժանորդագինը և մասնակցողների անունները Գիւղատնտեսին տալիս են հիմք մեր գիւղերում ընդարձակ տարածւելուն։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Թիֆլիսի Ջգրաշէն եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը ծխական տուրք է որոշել այդ եկեղեցու երկսեռ ծխական դպրոցները պահպանելու համար։ Կրթական գործի համար այս տուրքն անշուշտ մեծ հաճոյքով կըհատուցանեն ծխականները և օրինակ կըհանդիսանան քաղաքիս միւս եկեղեցիների ծխականների համար։

Շատ ցանկալի է, որ մեր միւս կուլտուրական, բարեգործական հաստատութիւնները էլ պահպանէին տարեկան որոշ տուրքով ու վերջ տուէին դպրոցների, ընկերութիւնների օգտին տուող երեկոյթներն ու ներկայացումները։ Իսկ այդ տեսակ հանդէսներն էլ ծառայէին սոսկ էսթետիկ-կրթական գործին և եկամուտներն էլ ստանային իրանք արւեստագէտները, որոնք աւելի են կարօտ հովանաւորութեան ու պաշտպանութեան, քան յաճախ այն հաստատութիւնները, որոնց օգտին ծառայեցնում են նրանց.

ՆՈՐԱԳՈՅՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Ճուղուրեանցի «ՋԱՏՈՅԻ ԲԱՂԴԻ ԱՆԻՒԸ» գիրքը 102 եր., որ մամուլի տակից լոյս էր տեսել, գրաքննական ատեանը չըթոյլատրեց տարածելու։

—

Խմբագրութեանս մէջ ստացւել են հետեւեալ նորագոյն հրատարակութիւնները՝ Գ. Ենգիբարեան— Մատենախօսութիւն, 414 եր. օր. Ն. Աղանեանի առաջաբանով գինը 1 ր. 25 կ.։ Հանրամատչ. գրադ. Հ. Առաքելեանի. դասագրքերի սերիա՝ Ձեռնարկ տարրական տրամաբանութեան, հոգեբանութեան եւ բանահիւսութեան, ի պէտս հայոց ազգային դպրոցների, կազմեց Հ. Առաքելեան, 258 եր., գինը 50 կ.։ Բովանդակութիւն՝ I մ. Տարրական տրամաբանութիւն և հոգեբանութիւն, սկզբնական գիտելիք, լոգիկա և հոգեբանութիւն։ II մ. Տարրերք բանահիւսութեան։ Ոճի տեսութիւնը։ Գրոզայի տեսութիւնը։ Տեսութիւն բանաստեղծութեան։ Archer de Lima.—Una famiclia (դրամա 1 գործող.) հրատ. Հռոմում, 50 եր.։ Ե. Թուխչեան՝ Երիտասարդ Թիւրքիան եւ հայերը, 288 եր. գինը 60 կ.։ Բովանդակութիւն՝ Թիւրքիայի ծագումն ու հզօրանալը։ Իսլամի դերը։ Տնտեսական գործօններ։ Հարկահանութիւն։ Սուլթանը և իր գործակալները։ Ներքին ու արտաքին քայքայում։ Բարենորոգչական փորձեր։ Պալատական յեղաշրջումներ։ Միդհատեան սահմանադրութիւնը։ Միդհատ փաշան հալածական։ Դատ և մահ։ Օսմանեան առաջին պարլամենտը։ Երիտասարդ Թիւրքերը և Միդհատ փաշայից յետոյ։ Հայերի Թիւրը Թիւրքիայում։ Հոսանքներ հայկական ներքին կեանքում։ Հայոց ազգային սահմանադրութիւնը։ Հայկական տառապանքը։ Աղերսանքների արդիւնքը։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. հրատար. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ 1908 թ. № 2 գիրք. 159 մեծադիր եր., Նոր-Բայազէտի գաւառի քարտէզով. քաղաքի և գերբների 6 պատկերներով։